

Գլխավոր տեղեկություն

Համար	թիվ 378
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Ինկորպորացիա (26.05.2024-մինչ օրս)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	Չի հրապարակվել պաշտոնական պարբերականում
Ընդունող մարմին	Մաքսային միության հանձնաժողով
Ընդունման ամսաթիվ	20.09.2010
Ստորագրող մարմին	Մաքսային միության հանձնաժողովի անդամներ
Ստորագրման ամսաթիվ	20.09.2010

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 սեպտեմբերի 2010 թվականի

թիվ 378

քաղ. Մոսկվա

ՄԱՔՍԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԴԱՍԱԿԱՐԳԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(վերնագիրը փոփ. էՏՀԿ 16.01.18 թիվ 5)

Մաքսային միության հանձնաժողովը **որոշեց.**

- 2011 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտնելու ժամկետով հաստատել՝
 - մաքսային ընթացակարգերի տեսակների դասակարգիչը (հավելված 1),
 - ապրանքների տեղափոխման առանձնահատկությունների դասակարգիչը (հավելված 2),
 - տրանսպորտի և ապրանքների փոխադրման տեսակների դասակարգիչը (հավելված 3),
 - մաքսային արժեքի որոշման մեթոդների դասակարգիչը (հավելված 4),
 - մաքսային արժեքի մաքսային հսկողության արդյունքների դասակարգիչ (հավելված 5),
 - ապրանքների մաքսային հայտարարագրման առանձնահատկությունների դասակարգիչը (հավելված 6),
 - մաքսային վճարների վճարման գծով արտոնությունների դասակարգիչը (հավելված 7),
 - մաքսային փաստաթղթերի տեսակների դասակարգիչը (հավելված 8),
 - այն հարկերի, հավաքագրումների և այլ վճարների տեսակների դասակարգիչը, որոնց գանձումը վերապահված է մաքսային մարմիններին (հավելված 9),
 - այն մաքսային և այլ վճարների վճարման առանձնահատկությունների դասակարգիչը, որոնց գանձումը վերապահված է մաքսային մարմիններին (հավելված 10),
 - այն մաքսային և այլ վճարների վճարման եղանակների դասակարգիչը, որոնց գանձումը վերապահված է մաքսային մարմիններին (հավելված 11),
 - բեռի, փաթեթվածքի և փաթեթավորման նյութերի տեսակների դասակարգիչը (հավելված 12),
 - մատակարարման պայմանների դասակարգիչը (հավելված 13),
 - մաքսային մարմինների կողմից կայացվող որոշումների դասակարգիչը (հավելված 14),
 - չափման միավորների դասակարգիչը (հավելված 15),
 - հատուկ պարզեցված ընթացակարգերի տեսակների դասակարգիչը (հավելված 16),
 - ապրանքների մասին հայտարարագրերի տեսակների դասակարգիչը (հավելված 17),
 - «մաքսային տարանցում» ընթացակարգի պահպանումն ապահովելուն ուղղված

միջոցառումների դասակարգիչը (հավելված 18),

- մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորության կատարման ապահովելու եղանակների դասակարգիչը (հավելված 19),

- «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների տեղափոխման տեսակների դասակարգիչը (հավելված 20),

- մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման դեպքում կիրառվող լրացուցիչ հատկանիշների և բնորոշիչների դասակարգիչը (հավելված 21):

(1-ին կետը խմբ. եՏՀԿ 23.11.21 թիվ 152)

2. 2011 թվականի հունվարի 1-ից կիրառելի աշխարհի երկրների դասակարգիչը (հավելված 22) և արժույթների դասակարգիչը (հավելված 23):

2². Հաստատել 2015 թվականի սեպտեմբերի 1-ից ուժի մեջ մտնելու ժամկետով միջազգային փոխադրման տրանսպորտային միջացների տեսակների դասակարգիչը (Հավելված 25) և ճանապարհային տրանսպորտային միջացների մակնիշների դասակարգիչը (Հավելված 26):

(2²-րդ կետը լրաց. եՏՀԿ 12.05.15 թիվ 52)

2³. Հաստատել այն ապրանքների կատեգորիաների դասակարգիչը, որոնք կարող են հայտագրվել ապրանքների բացթողման համար մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը (27-րդ հավելված):

(2³ -րդ կետը լրաց. եՏՀԿ 16.01.18 թիվ 5)

2⁴. Հաստատել մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի վճարման գծով պարտավորության կատարման ապահովման չտրամադրման դեպքերի դասակարգիչը (Հավելված 28):

(2⁴ -րդ կետը լրաց. եՏՀԿ 22.08.23 թիվ 124)

2⁵. Հաստատել մտավոր սեփականության օբյեկտների մասին տեղեկությունների դասակարգիչը (Հավելված 29):

(2⁴ -րդ կետը լրաց. եՏՀԿ 28.08.23 թիվ 132)

3. Սահմանել, որ Եվրասիական տնտեսական միության յուրաքանչյուր անդամ պետություն իրավասու է սույն Որոշման 2-րդ կետում նշված դասակարգիչներում կատարել լրացումներ, որոնք կիրառվում են Մաքսային միության մյուս անդամ պետություններին և Եվրասիական տնտեսական հանձնաժողովին ծանուցելուց հետո:

(3-րդ կետը փոփ. եՏՀԿ 12.05.15 թիվ 52)

4. Եվրասիական տնտեսական հանձնաժողովը՝ շարունակել աշխարհի երկրների և արժույթների դասակարգիչները վարելու համար լիազորված՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մարմինների հետ սույն Որոշման 2-րդ կետում նշված դասակարգիչների միասնականացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

(4-րդ կետը փոփ. եՏՀԿ 12.05.15 թիվ 52)

Մաքսային միության հանձնաժողովի անդամներ՝

**Բելառուսի
Հանրապետությունից**

Ա. Կոբյակով

**Ղազախստանի
Հանրապետությունից**

Ու. Շուկեն

**Ռուսաստանի
Դաշնությունից**

Ի. Շուվալով

Հավելված 1
Մաքսային միության հանձնաժողովի
2010 թվականի սեպտեմբերի 20-ի
թիվ 378 որոշման

Մաքսային ընթացակարգերի տեսակների դասակարգիչ

Ճածկագիր	Անվանում
00	Նախորդող մաքսային ընթացակարգերի բացակայություն
10	Արտահանում
21	Մաքսային տարածքից դուրս վերամշակում
23	Ժամանակավոր արտահանում
31	Վերաարտահանում
40	Ներքին սպառման համար բացթողում
51	Մաքսային տարածքում վերամշակում
53	Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)
60	Վերաներմուծում
70	Մաքսային պահեստ
77	Ազատ պահեստ
78	Ազատ մաքսային գոտի
80	Մաքսային տարանցում

90	Հատուկ մաքսային ընթացակարգ
91	Ներքին սպառման համար վերամշակում
93	Ոչնչացում
94	Հրաժարում՝ հոգուտ պետության
96	Անմաքս առևտուր

Հավելված 2
Մաքսային միության հանձնաժողովի
2010 թվականի սեպտեմբերի 20-ի
թիվ 378 որոշման

Ապրանքների տեղափոխման առանձնահատկությունների դասակարգիչ

Ծածկագիր	Անվանում
000	Ապրանքների տեղափոխման առանձնահատկությունները սահմանված չեն
001	Անհատույց օգնություն ցուցաբերելու և (կամ) բարեգործական նպատակների համար նախատեսված ապրանքներ
002	Մարդասիրական օգնության կարգով ստացվող ապրանքներ
003	Տեխնիկական օգնություն ցուցաբերելու համար նախատեսված ապրանքներ
004	Տարերային աղետների, բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների հետևանքների կանխարգելման և վերացման նպատակներով տեղափոխվող ապրանքներ
005	Շրջանառության մեջ բաց թողնված դրամական ոսկի, ազգային արժույթ և արտարժույթ (բացի դրամագիտական նպատակներով օգտագործվող արժույթից), արժեթղթեր
009	Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից ծագող, որսված և ցանկացած տեսակի տրանսպորտային միջոցով ներմուծվող ու Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից ծագած համարվող ծովային արդյունագործության արտադրանք
010	Որպես պաշարներ տեղափոխվող ապրանքներ
013	Կանոնադրական կապիտալում (ֆոնդում) որպես ներդրում տեղափոխվող ապրանքներ
018	Սխալմամբ մատակարարված ապրանքներ
020	Սպորտային մրցումների և մարզումների, համերգների, թատերական ներկայացումների, մրցույթների, փառատոների, կրոնական, մշակութային և նույնատիպ այլ միջոցառումների անցկացման, ցուցահանդեսների, տոնավաճառների ժամանակ ցուցադրությունների, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցներով պաշտոնական և այլ միջոցառումների անցկացման ու լուսաբանման համար նախատեսված և վերադարձման ենթակա ապրանքներ՝ բացառությամբ 090 և 099, 097 դիրքերում նշված ապրանքների
021	Գովազդային նյութեր և հուշանվերային արտադրանք, որոնք ենթակա չեն վերադարձման
027	Որպես բազմաշրջանառու տարաներ օգտագործվող փաթեթվածքներ, կոնտեյներներ, տակդիրներ, որոնք ենթակա են վերադարձման
031	Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կազմակերպությունների և հյուպատոսական հիմնարկների արտերկրում գործունեությունն ապահովելու համար նախատեսված ապրանքներ
032	Օտարերկրյա պետությունների, միջազգային միջկառավարական կազմակերպությունների և Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետությունների հյուպատոսական հիմնարկների հասցեով տեղափոխվող ապրանքներ
033	Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում տեղակայված՝ միջազգային կազմակերպություններին կից պետությունների ներկայացուցչությունների, միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների կողմից պաշտոնական օգտագործման համար տեղափոխվող ապրանքներ
	Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում տեղակայված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային

034	Օրենսգրքի 2-րդ հոդվածի 3-րդ կետով Բ-րդ ենթակետում նշված կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների կողմից պաշտոնական օգտագործման համար տեղափոխվող ապրանքներ
042	Բողոքագրի հիման վրա մատակարարվող կամ վերադարձվող ապրանքներ
044	Վերանորոգում կատարելու և (կամ) երաշխիքային սպասարկում իրականացնելու նպատակով տեղափոխվող կամ վերադարձվող ապրանքներ, այդ թվում՝ տրանսպորտային միջոցներ, դրանց պահեստամասեր և (կամ) սարքավորումներ
054	Գազի պահեստարան մատակարարվող կամ այդպիսի պահեստարաններից վերադարձող բնական գազ
055	Խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող և դրա հետ կարգաբերման-գործարկման աշխատանքներ կատարելու համար անհրաժեշտ ապրանքներ
061	Տեխնիկական կանոնակարգման միջոցների պահպանումը հաստատելու հետ չկապված հետազոտությունների և փորձարկումների անցկացման համար որպես փորձանմուշներ (նմուշներ) տեղափոխվող ապրանքներ
062	Իոնացնող ճառագայթման աղբյուրների չվերականգնվող մնացորդներ
063	«Արտադրանքը բաժանելու մասին» համաձայնագրերին համապատասխան մատակարարվող ապրանքներ
064	Տեխնիկական կանոնակարգման միջոցների պահպանումը հաստատելու նպատակների համար որպես փորձանմուշներ (նմուշներ) ներմուծվող (ներմուծված) ապրանքներ
065	Կոմպլեկտավորող տարրեր, բաղադրիչներ, հումք և (կամ) նյութեր՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում արտադրանքի արտադրության (պատրաստման) համար, որոնք ներմուծվում (ներմուծվել) են այդ արտադրանքը պատրաստողի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից՝ բացառապես հայտարարատուի նպատակներով արտադրանքի արտադրման (պատրաստման) համար (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 130 որոշմանը համապատասխան):
066	Հատավաճառ արտադրանքի առանձին նմուշ (այսուհետ՝ եզակի նմուշ) կամ հատավաճառ արտադրանքի նմուշի՝ համատեղելի և մեկ նշանակություն ունեցող տարրերի ամբողջություն՝ դրանցից եզակի նմուշ պատրաստելու համար, որոնք ներմուծվում (ներմուծվել) են առևտրային գործունեության ընթացքում Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում անհատույց կամ հատուցելի հիմունքով դրանց տարածումը բացառող կարիքների համար (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 130 որոշմանը համապատասխան)
067	Արտադրանք, որը եղել է օգտագործման (շահագործման) մեջ (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 130 որոշմանը համապատասխան)
070	Եվրասիական տնտեսական անդամ պետությունների տարածքների սահմաններից դուրս գտնվող այն արհեստական կղզիների, կառույցների, այլ օբյեկտների շինարարության (կառուցման) համար նախատեսված ապրանքներ, որոնց նկատմամբ Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններն ունեն (կունենան) բացառիկ իրավագործություն
071	Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքների սահմաններից դուրս գտնվող այն արհեստական կղզիներ, կայանքներ, կառույցներ և այլ օբյեկտներ կամ այն արհեստական կղզիներից, կայանքներից, կառույցներից և այլ օբյեկտներից տեղափոխվող ապրանքներ, որոնց նկատմամբ Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններն ունեն (կունենան) բացառիկ իրավագործություն
	Օտարերկրյա ապրանքներ (սարքավորումներ՝ ներառյալ մեքենաները, մեխանիզմները, ինչպես նաև սարքավորումների լրակազմող տարրերը և պահեստամասերը, գործիքներ, նյութեր և այլ արտադրատեսակներ), որոնք մինչև 2043 թվականի դեկտեմբերի 31-ը ներմուծվում (ներմուծվել) են Եվրասիական

Ծածկագիր	տնտեսական միության մաքսային տարածք և նախատեսված են
072	Եվրասիական տնտեսական միության անդամ պետության տարածքային ծովի և ներքին ծովային ջրերի սահմաններում գտնվող արհեստական կղզիների, կայանքների, կառույցների կամ այլ օբյեկտների շինարարության (ստեղծման, կառուցման), գործունեության (շահագործման, օգտագործման) ապահովման և ընդերքի երկրաբանական ուսումնասիրության, օգտակար հանածոների հանքավայրերի փնտրման և գնահատման, ածխաջրածնային հումքի ծովային հանքավայրերի հետախուզման ու մշակման ժամանակ համապատասխան տարածքներում անվտանգության ապահովման համար
090	Սոչի քաղաքում 2014 թվականի ձմեռային XXII օլիմպիական և ձմեռային XI պարալիմպիկ խաղերի նախապատրաստման և (կամ) անցկացման համար տեղափոխվող ապրանքներ
096	(դիրքը հանվել է ԵՏՀԿ 12.09.17 թիվ 116)
097	Մինսկ քաղաքում 2014 թվականի հոկտեմբերի աշխարհի առաջնության նախապատրաստման և (կամ) անցկացման համար տեղափոխվող ապրանքներ
098	Վլադիվոստոկ քաղաքում 2012 թվականի Ասիական-խաղաղովկիանոսյան տնտեսական համագործակցության (ԱԽՏՀ) գագաթաժողովի նախապատրաստման և (կամ) անցկացման համար տեղափոխվող ապրանքներ
099	2018 թվականի ՖԻՖԱ ֆուտբոլի աշխարհի առաջնության և 2017 թվականի ՖԻՖԱ, 2020 թվականի ՈԲԵՖԱ-ի ֆուտբոլի Եվրոպայի առաջնության կոնֆեդերացիաների գավաթի կազմակերպման և անցկացման ժամանակ կամ դրանց նախապատրաստվելու համար մարզական միջոցառումների անցկացման ժամանակ օգտագործելու համար տեղափոխվող ապրանքներ
100	«Հյուսիսային հոսք» գազատարի շինարարության համար տեղափոխվող ապրանքներ
101	«Հարավային հոսք» գազատարի շինարարության համար տեղափոխվող ապրանքներ
102	Ապրանքներ, որոնք պատրաստված (ստացված) են «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից, և ապրանքներ, որոնք պատրաստված (ստացված) են «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից և Եվրասիական տնտեսական միության այն ապրանքներից, որոնց կարգավիճակը որոշվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 210-րդ հոդվածի 8-րդ կետին համապատասխան
103	Ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտու տարածքում գտնվող ապրանքներ, որոնք մաքսային մարմնի կողմից չեն կարող նույնականացվել որպես ապրանքներ, որոնք գտնվել են ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտու տարածքում մինչև դրա ստեղծումը, կամ որպես ապրանքներ, որոնք ներմուծված են ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտու տարածք կամ պատրաստված (ստացված) են ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտու տարածքում
104	Ապրանքներ, որոնք պատրաստված (ստացված) են «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից, և ապրանքներ, որոնք պատրաստված (ստացված) են «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից և Եվրասիական տնտեսական միության այն ապրանքներից, որոնց կարգավիճակը որոշվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 218-րդ հոդվածի 8-րդ կետին համապատասխան
105	Ազատ պահեստում գտնվող ապրանքներ, որոնք մաքսային մարմնի կողմից չեն կարող նույնականացվել որպես ապրանքներ, որոնք գտնվել են ազատ պահեստի տարածքում մինչև դրա ստեղծումը, կամ որպես ապրանքներ, որոնք ձևակերպված են «ազատ պահեստ» ընթացակարգով կամ պատրաստված (ստացված) են ազատ պահեստում
	Այն մասերը, հանգույցները, ագրեգատները, որոնք մաքսային մարմնի կողմից կարող են նույնականացվել որպես այնպիսի

106	ապրանքներ, որոնք մտնում են (մտել են) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների կազմի մեջ
107	Այն մասերը, հանգույցները, ագրեգատները, որոնք մաքսային մարմնի կողմից կարող են նույնականացվել որպես այնպիսի ապրանքներ, որոնք մտնում են (մտել են) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների կազմի մեջ
110	(դիրքը հանվել է ԵՏՀԿ 16.01.18 թիվ 5)
111	(դիրքը հանվել է ԵՏՀԿ 16.01.18 թիվ 5)
112	Ապրանքներ, որոնք պատրաստված (ստացված) են բացառապես Եվրասիական տնտեսական միության՝ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից, այդ թվում՝ Եվրասիական տնտեսական միության այն ապրանքների օգտագործմամբ, որոնք ձևակերպված չեն «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով, որոնք ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտու տարածքից արտահանվում են Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքի մնացած մաս
113	Ապրանքներ, որոնք պատրաստված (ստացված) են Եվրասիական տնտեսական միության ապրանքներից, այդ թվում՝ այն ապրանքներից, որոնք ձևակերպված չեն «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով, որոնք ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտու տարածքից արտահանվում են Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքի սահմաններից դուրս
114	«Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված՝ օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներ և «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված՝ օտարերկրյա ապրանքներից և Եվրասիական տնտեսական միության ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներ, որոնք ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտու տարածքից արտահանվում են Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքի սահմաններից դուրս, այն դեպքում, երբ այդ ապրանքները ճանաչվել են Եվրասիական տնտեսական միության ապրանքներ՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 210-րդ հոդվածին համապատասխան
115	«Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված՝ օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներ և «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված՝ օտարերկրյա ապրանքներից և Եվրասիական տնտեսական միության ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներ, որոնք ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտու տարածքից արտահանվում են Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքի մնացած մաս, որոնց նկատմամբ իրականացվել է «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված՝ օտարերկրյա ապրանքների նույնականացում
116	«Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված՝ օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներ և «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված՝ օտարերկրյա ապրանքներից և Եվրասիական տնտեսական միության ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներ, որոնք ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտու տարածքից արտահանվում են Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքի մնացած մաս, որոնց նկատմամբ չի իրականացվել «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների նույնականացում
117	«Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված՝ օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներ և «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված՝ օտարերկրյա ապրանքներից և Եվրասիական տնտեսական միության ապրանքներից

Ծածկագիր	պատրաստված (ստացված) ապրանքներ, որոնք ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտու տարածքից արտահանվում են Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքի սահմաններից դուրս, այն դեպքում, երբ այդ ապրանքները չեն ճանաչվել Եվրասիական տնտեսական միության ապրանքներ՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 210-րդ հոդվածին համապատասխան
118	«Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված սարքավորումներ, որոնք շահագործման մեջ են դրվել և օգտագործվում են ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտու ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) կողմից ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտու տարածքում գործունեություն իրականացնելու մասին համաձայնագրի (պայմանագրի) (ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտում գործունեության պայմանների, ներդրման հայտարարագրի, ձեռնարկատիրական ծրագրի մասին պայմանագրի) իրագործման համար, որոնք ձևակերպվում են «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ հաշվի առնելով Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերությամբ սահմանված՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման առանձնահատկությունները
119	Նավահանգստային ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտու կամ լոգիստիկ ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտու տարածքում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներ, որոնք ձևակերպվում են «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ հաշվի առնելով Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերությամբ սահմանված՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման առանձնահատկությունները
120	<i>(դիրքը հանվել է ԵՏՀԿ 16.01.18 թիվ 5)</i>
121	<i>(դիրքը հանվել է ԵՏՀԿ 16.01.18 թիվ 5)</i>
122	Ապրանքներ, որոնք պատրաստված (ստացված) են բացառապես Եվրասիական տնտեսական միության՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից, որոնք ազատ պահեստի տարածքից արտահանվում են Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքի մնացած մաս
123	Եվրասիական տնտեսական միության ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներ, որոնք ազատ պահեստի տարածքից արտահանվում են Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքի սահմաններից դուրս
124	«Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված՝ օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներ և «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված՝ օտարերկրյա ապրանքներից և Եվրասիական տնտեսական միության ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներ, որոնք ազատ պահեստի տարածքից արտահանվում են Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքի սահմաններից դուրս, որոնք ճանաչվել են Եվրասիական տնտեսական միության ապրանքներ՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 218-րդ հոդվածին համապատասխան
125	«Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված՝ օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներ և «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված՝ օտարերկրյա ապրանքներից և Եվրասիական տնտեսական միության ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներ, որոնք ազատ պահեստի տարածքից արտահանվում են Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքի մնացած մաս, որոնց նկատմամբ իրականացվել է «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով

Ծածկագիր	ձևակերպված օտարերկրյա ապրանքների նույնականացում
126	«Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված՝ օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներ և «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված՝ օտարերկրյա ապրանքներից և Եվրասիական տնտեսական միության ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներ, որոնք ազատ պահեստի տարածքից արտահանվում են Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքի մնացած մաս, որոնց նկատմամբ չի իրականացվել «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների նույնականացում
127	«Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված՝ օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներ և «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված՝ օտարերկրյա ապրանքներից և Եվրասիական տնտեսական միության ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներ, որոնք ազատ պահեստի տարածքից արտահանվում են Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքի սահմաններից դուրս, որոնք չեն ճանաչվել Եվրասիական տնտեսական միության ապրանքներ՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 218-րդ հոդվածին համապատասխան
128	«Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված, ազատ պահեստի տիրապետողի կողմից շահագործման մեջ դրված և Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված գործողություններն իրականացնելու համար օգտագործվող սարքավորումներ, որոնք ձևակերպվում են «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ հաշվի առնելով Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 217-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերությամբ սահմանված՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնազգման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման առանձնահատկությունները
129	«Վերաներմուծում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներ, որոնց համար, Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետին համապատասխան, իրականացվում է հարկերի և (կամ) դրանցից տոկոսների, այլ հարկերի, սուբսիդիաների գումարների և այլ գումարների փոխհատուցում
130	«Վերաներմուծում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներ, որոնց համար, Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետին համապատասխան, չի իրականացվում հարկերի և (կամ) դրանցից տոկոսների, այլ հարկերի, սուբսիդիաների գումարների և այլ գումարների փոխհատուցում
131	Ապրանքների՝ մաքսային տարածքում վերամշակման և ներքին սպառման համար վերամշակման արդյունքում գոյացած թափոններ
132	Ապրանքների՝ մաքսային տարածքում վերամշակման և ներքին սպառման համար վերամշակման արդյունքում գոյացած մնացորդներ
133	«Մաքսային տարածքում վերամշակում», «մաքսային տարածքից դուրս վերամշակում», «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգերով ձևակերպված ապրանքների վերամշակման արդյունքում ստացված՝ վերամշակումից հետո ստացվելիք արդյունքներ
134	Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 172-րդ հոդվածին համապատասխան՝ համարժեք ապրանքների վերամշակման գործողությունների արդյունքում ստացված՝ վերամշակման արդյունքներ, որոնք արտահանվում են Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից՝ բացառությամբ 136 և 138 ծածկագրերով դիրքերում նշված ապրանքների
135	Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 183-րդ հոդվածին համապատասխան վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների փոխարեն Եվրասիական

Ծածկագիր	տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող օտարերկրյա ապրանքներ
136	Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 172-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերությանը համապատասխան, օտարերկրյա ապրանքների փոխանակման արդյունքում ստացված՝ վերամշակման արդյունքներ, որոնք արտահանվում են Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից
137	Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 183-րդ հոդվածին համապատասխան, եթե վերամշակման գործողություններն իրականացվում են այն ապրանքների նկատմամբ, որոնք տեղափոխվում են
138	Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 172-րդ հոդվածին համապատասխան՝ համարժեք ապրանքների վերամշակման գործողությունների արդյունքում ստացված՝ վերամշակման արդյունքներ, եթե վերամշակման գործողությունն ապրանքների վերանորոգումն է, այդ թվում՝ երաշխիքային, որոնք արտահանվում են Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից՝ բացառությամբ 136-րդ ծածկագրով դիրքում նշված ապրանքների
139	«Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքները, որոնց նկատմամբ ենթադրվում է այդ մաքսային ընթացակարգի գործողության ավարտ՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետին համապատասխան
140	Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 243-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետում նշված անձանց անմաքս առևտրի խանութներում իրացված օտարերկրյա ապրանքները, որոնց նկատմամբ «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է «բացթողում» ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպելու միջոցով՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 246-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան
141	Օտարերկրյա ապրանքներ, որոնց նկատմամբ «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգն ավարտվում է «բացթողում» ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով դրանք ձևակերպելու միջոցով՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 246-րդ հոդվածի 4-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան
15X*	Ապրանքների տեղափոխման համար Բելառուսի Հանրապետությունում միակողմանիորեն ներմուծված այլ առանձնահատկություններ
16X*	Ապրանքների տեղափոխման համար Ղազախստանի Հանրապետությունում միակողմանիորեն ներմուծված այլ առանձնահատկություններ
17X*	Ապրանքների տեղափոխման համար Ռուսաստանի Դաշնությունում միակողմանիորեն ներմուծված այլ առանձնահատկություններ
174	Ապրանքները, որոնք անհրաժեշտ են օդային անցակետի կամ միջազգային օդանավակայանի գործունեության ապահովման համար (Ռուսաստանի Դաշնության համար)
175	Ապրանքները, որոնք նախատեսված են ծովի (գետի) անցակետերում գտնվող՝ ծովի (գետի) նավահանգիստների գործունեության ապահովման համար (Ռուսաստանի Դաշնության համար)
176	Բայկոնուր» համալիրի տարածք կամ «Բայկոնուր» համալիրի տարածքից տեղափոխվող ապրանքներ (Ռուսաստանի Դաշնության համար)
	Ապրանքներ (բացառությամբ ենթաակցիզային ապրանքների), որոնք ներմուծվում են նորարարական գիտատեխնիկական կենտրոնների տարածքներում անշարժ գույքի օբյեկտների կառուցման, սարքավորման և տեխնիկական հագեցվածությամբ ապահովելու ժամանակ դրանք օգտագործելու նպատակներով կամ անհրաժեշտ են ծրագրի մասնակիցների կողմից գիտատեխնիկական գործունեությունն իրականացնելու համար, ինչպես նաև ապրանքներ (քիմիական,

Ծածկագիր	Ֆիզիկական, կենսաբանական և սոցիալական գիտություններ, ռեազենտներ և այլ նյութեր, պատրաստուկներ, որոնք նախատեսված են գիտահետազոտական և (կամ) տարբեր լաբորատոր աշխատանքների համար), որոնք ներմուծվում են Ռուսաստանի Դաշնության տարածքում ծրագրի մասնակիցների և այլ իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի կողմից կրթական և (կամ) գիտատեխնիկական գործունեություն իրականացնելու համար դրանք օգտագործելու նպատակներով, և որոնք համար տրամադրվում են սուբսիդիաներ որպես մաքսատուրքերի և ավելացված արժեքի հարկի վճարման ծախսերի փոխհատուցում (Ռուսաստանի Դաշնության համար):
178	Ապրանքներ, որոնք ներմուծվում են նորարարական գիտատեխնիկական կենտրոնների տարածքներում անշարժ գույքի օբյեկտների կառուցման, սարքավորման և տեխնիկական հագեցվածությամբ ապահովելու ժամանակ դրանք օգտագործելու նպատակներով կամ անհրաժեշտ են ծրագրի մասնակիցների կողմից գիտատեխնիկական գործունեություն իրականացնելու համար, ինչպես նաև ապրանքներ (քիմիական, ֆիզիկական, կենսաբանական ռեակտիվներ, ռեազենտներ և այլ նյութեր, պատրաստուկներ, որոնք նախատեսված են գիտահետազոտական և (կամ) տարբեր լաբորատոր աշխատանքների համար), որոնք ներմուծվում են Ռուսաստանի Դաշնության տարածքում ծրագրի մասնակիցների և այլ իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի կողմից կրթական և (կամ) գիտատեխնիկական գործունեություն իրականացնելու համար դրանք օգտագործելու նպատակներով, բացառությամբ 177-րդ ծածկագրի ներքո նշված ապրանքների (Ռուսաստանի Դաշնության համար)
179	Ալկոհոլային արտադրանք, որը ներմուծվում (ներմուծվել) է Ռուսաստանի Դաշնություն դաշնային հատուկ դրոշմանիշների գետեղման նպատակով (այդ թվում՝ ձևակերպվում է «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով՝ դաշնային հատուկ դրոշմանիշների գետեղման համար, թողարկվում է հայտագրված մաքսային ընթացակարգին համապատասխան՝ դաշնային հատուկ դրոշմանիշների գետեղումից հետո, արտահանվում է «վերաարտահանում» մաքսային ընթացակարգին համապատասխան՝ առանց դաշնային հատուկ դրոշմանիշների գետեղման) (Ռուսաստանի Դաշնության համար)
201	Կապիտալ ներդրումների պաշտպանության և խրախուսման մասին համաձայնագրի շրջանակներում տեղափոխվող ապրանքներ (Ռուսաստանի Դաշնության համար)
202	Արդյունաբերության պաշտպանական ճյուղերի արտադրական ու գիտատեխնիկական ձեռնարկությունների կոոպերացիայի մասին միջկառավարական պայմանագրերին համապատասխան տեղափոխվող ապրանքներ (Ռուսաստանի Դաշնության համար)»:
203	Ապրանքներ, որոնք Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով փոխադրվում են տրոհվող և ռադիոակտիվ նյութերի մատակարարման կոնտրակտին (պայմանագրին, համաձայնագրին) համապատասխան մեկ մատակարարման շրջանակներում նման նյութերի հետ միասին՝ ներառյալ փաթեթվածքը, տրանսպորտային փաթեթվածքի լրակազմերը և դրանց համար հարմարանքները, որոնց մասին տեղեկությունները նշված են տրանսպորտային փաթեթվածքի լրակազմերի կոնստրուկցիայի և (կամ) փոխադրման թույլտվության հավաստագրերում, տրոհվող և ռադիոակտիվ նյութերի տրանսպորտային փոխադրման, պահպանման, շահագործման, չափման և արտադրության համար սարքավորումները և կոմպլեկտավորող տարրերը, տրոհվող և ռադիոակտիվ նյութերի արտադրության ընթացքում առաջացող թափոնները և մնացորդները, փաստաթղթեր (Ռուսաստանի Դաշնության համար):
	Ապրանքներ, որոնք Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով փոխադրվում են տրոհվող և ռադիոակտիվ նյութերի մատակարարման կոնտրակտի (պայմանագրի, համաձայնագրի) շրջանակներում նման նյութերից առանձին՝ ներառյալ փաթեթվածքը, տրանսպորտային փաթեթվածքի լրակազմերը և դրանց համար

Ծածկագիր	հարմարանքները, որոնց մասին տեղեկությունները նշված են տրանսպորտային փաթեթվածքի լրակազմերի կոնստրուկցիայի և (կամ) փոխադրման թույլտվության հավաստագրերում, տրոհվող և ռադիոակտիվ նյութերի տրանսպորտային փոխադրման, պահպանման, շահագործման, չափման և արտադրության համար սարքավորումները և կոմպլեկտավորող տարրերը, տրոհվող և ռադիոակտիվ նյութերի արտադրության ընթացքում առաջացող թափոնները և մնացորդները, փաստաթղթեր (Ռուսաստանի Դաշնության համար)
204	
205	Մինչև 14 տարեկան երեխաների օգտագործման համար նախատեսված ապրանքներ, բացառությամբ այն դեպքերի, երբ ապրանքները ենթարկվում են փոխադրման այլ առանձնահատկությունների (Ռուսաստանի Դաշնության համար)
206	Բժշկական և այլ նպատակների համար նախատեսված ռադիոակտիվ իզոտոպներ, դրանց համաձուլվածքները, միացությունները և խառնուրդները, ինչպես նաև վերոնշյալից ցանկացածը պարունակող արտադրանք կամ սարքվածք, որոնց կիսատրոհման պարբերաշրջանը 10 օրից պակաս է (կարճակյաց իզոտոպներ) (Ռուսաստանի Դաշնության համար)
18X*	Ապրանքների փոխադրման համար Հայաստանի Հանրապետությունում միակողմանիորեն կիրառվող այլ առանձնահատկություններ
180	Ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրի համաձայն փոխադրվող ապրանքներ (Հայաստանի Հանրապետության համար)

* Ծածկագրի երրորդ նիշը («X») կարող է ձեռք բերել «0»-«9» նշանակություն (հավելվածը փոփ. **ԵՏՀԿ 12.05.15 թիվ 52, լրաց. ԵՏՀԿ 02.05.17 թիվ 43, փոփ. ԵՏՀԿ 12.09.17 թիվ 116, խմբ., փոփ., լրաց. ԵՏՀԿ 16.01.18 թիվ 5, լրաց. ԵՏՀԿ 22.05.18 թիվ 81, ԵՏՀԿ 14.05.19 թիվ 71, ԵՏՀԿ 21.04.20 թիվ 50, ԵՏՀԿ 01.06.21 թիվ 62, խմբ., լրաց. ԵՏՀԿ 13.09.21 թիվ 118, ԵՏՀԿ 04.10.21 թիվ 135, ԵՏՀԿ 12.05.22 թիվ 76, լրաց. ԵՏՀԿ 15.11.22 թիվ 174, ԵՏՀԿ 04.04.23 թիվ 45, փոփ. ԵՏՀԿ 08.12.23 թիվ 174, լրաց. ԵՏՀԿ 23.04.24 թիվ 42)**

Հավելված 3
Մաքսային միության հանձնաժողովի
2010 թվականի սեպտեմբերի 20-ի
թիվ 378 որոշման

Տրանսպորտի տեսակների և ապրանքների տրանսպորտային փոխադրման դասակարգիչ

Ծածկագիր	Անվանում
10	Ծովային տրանսպորտ*
20	Երկաթուղային տրանսպորտ*
30	Ավտոճանապարհային տրանսպորտ*
40	Օդային տրանսպորտ*
50	Փոստային առաքանի
71	Խողովակաշարային տրանսպորտ
72	Էլեկտրահաղորդման գծեր
80	Ներքին ջրային տրանսպորտ*
90	Վարելու միջոցով՝ որպես ապրանք տեղափոխվող տրանսպորտային միջոց
99	Այլ

* այդ թվում՝ նշված տրանսպորտի տեսակով փոխադրվող ցանկացած տրանսպորտային միջոց

Հավելված 4
Մաքսային միության հանձնաժողովի
2010 թվականի սեպտեմբերի 20-ի
թիվ 378 որոշման

Մաքսային արժեքի որոշման մեթոդների դասակարգիչ

Ծածկագիր	Անվանում
0	Մաքսային արժեքը հետաձգված կարգով որոշելը
1	Ներմուծվող ապրանքների հետ կապված գործարքի արժեքի մեթոդ
2	Ի. ռումբի մասնաշաղկապի հետ կապված գործարքի արժեքի

2	Միջնակարգ ապրանքների ուսման գնագրված գործարքի արժեքի մեթոդ
3	Համանման ապրանքների հետ կապված գործարքի արժեքի մեթոդ
4	Հանման մեթոդ
5	Գումարման մեթոդ
6	Պահուստային մեթոդ

ՀԱՎԵԼՎԱԾ թիվ 5
Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 378 որոշման (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2021 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 152 որոշման խմբագրությամբ)

ԴԱՍԱԿԱՐԳԻՉ

մաքսային արժեքի մաքսային հսկողության արժեքների

Ծածկագիր	Անվանումը
0	Ապրանքների հայտարարագրի մեջ ներկայացված՝ ապրանքների մաքսային արժեքի վերաբերյալ տեղեկությունները չեն փոփոխվել (չեն լրացվել)
1	Ապրանքների հայտարարագրի մեջ ներկայացված՝ ապրանքների մաքսային արժեքի վերաբերյալ տեղեկությունները փոփոխվել (լրացվել) են
2	Անցկացվում է մաքսային հայտարարագրման ժամանակ ներկայացված՝ ապրանքների մաքսային արժեքի մաքսային հսկողություն, որն սկսվել է Նախքան ապրանքների բացթողումը, իսկ Նախքան հայտարարագիր ներկայացնելը բաց թողնված ապրանքների առնչությամբ՝ ապրանքների մաքսային արժեքի մաքսային հսկողություն, որն սկսվել է՝ Նախքան մաքսային մարմնի կողմից էլեկտրոնային փաստաթուղթը հայտարարատուին ուղարկվելը կամ Նախքան թղթային կրիչով ներկայացված ապրանքների հայտարարագրի և (կամ) առևտրային, տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերի վրա համապատասխան նշումներ կատարվելը՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 120-րդ հոդվածի 17-րդ կետին համապատասխան

(հավելվածը խմբ. ԵՏՀԿ 23.11.21 թիվ 152)

Հավելված 6
Մաքսային միության հանձնաժողովի
2010 թվականի սեպտեմբերի 20-ի
թիվ 378 որոշման

Ապրանքների մաքսային հայտարարագրման առանձնահատկությունների դասակարգիչ

Ծածկագիր	Ապրանքների մաքսային հայտարարագրման առանձնահատկությունները
ՄԴԴ	Նախնական մաքսային հայտարարագրում Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 114-րդ հոդվածին համապատասխան
ՈԿԴ	Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ ձևով տեղափոխվող ապրանքների Նախնական մաքսային հայտարարագրումը (բաղադրիչի վերաբերյալ ապրանքների հայտարարագիր) (Ռուսաստանի Դաշնության համար)
ՈՈԿ	Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ ձևով տեղափոխվող ապրանքների Նախնական մաքսային հայտարարագրումը (վերջին բաղադրիչի վերաբերյալ ապրանքների հայտարարագիր) (Ռուսաստանի Դաշնության համար)
ՄԴԴ	Ոչ ամբողջական մաքսային հայտարարագրում Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 115-րդ հոդվածին համապատասխան
ՄԴԴ	Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 115-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան ոչ լրիվ մաքսային

ԾԱԾԿ-գիր	հայտարարագրման և փաստաթղթերի հայտարարագրման և փաստաթղթերի հայտարարագրման (Բելառուսի Հանրապետության համար)
ՊԴԴ	Պարբերական մաքսային հայտարարագրում Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 116-րդ հոդվածին համապատասխան
ՓՈՑ	Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 116-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան պարբերական մաքսային հայտարարագրման ժամանակ հայտագրված՝ պակասող տվյալների, ինչպես նաև ապրանքների փաստացի քանակության մասին տվյալների հայտագրում (ապրանքների հայտարարագրի ճշգրտում) (Բելառուսի Հանրապետության համար)
ՅԴԴ	Ժամանակավոր պարբերական հայտարարագրում (Ժամանակավոր հայտարարագիր) (Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության համար)
ՈՅԴ	Ժամանակավոր պարբերական հայտարարագրում (ամբողջական հայտարարագիր) (Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության համար)
ՕԿԴ	Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում տեղափոխվող ապրանքների մաքսային հայտարարագրման առանձնահատկությունները (բաղադրիչի վերաբերյալ ապրանքների հայտարարագիր)
ՅՈԿ	Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում տեղափոխվող ապրանքների մաքսային հայտարարագրման առանձնահատկությունները (վերջին բաղադրիչի վերաբերյալ ապրանքների հայտարարագիր)
ՅԿԴ	Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ ձևով տեղափոխվող ապրանքների մաքսային հայտարարագրման առանձնահատկությունները (բաղադրիչների պայմանական բացթողման դիմում) (Ռուսաստանի Դաշնության համար)
ՅՈՅ	Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ ձևով տեղափոխվող ապրանքների մաքսային հայտարարագրման առանձնահատկությունները (ապրանքների ընդհանուր հայտարարագիր) (Ռուսաստանի Դաշնության համար)
ՈԴՅ	Ժամանակավոր պարբերական մաքսային հայտարարագրում (ապրանքների մասին ամբողջական հայտարարագիրը, որը ներկայացվել է ապրանքների մասին մեկ ժամանակավոր հայտարարագրի հիման վրա մատակարարումներն ավարտելիս և նշանակում է ապրանքների մասին այդ ժամանակավոր հայտարարագրի շրջանակներում մատակարարումների ավարտ) (Ռուսաստանի Դաշնության համար)
ՅԴԴ	Մինչև մաքսային հայտարարագիր ներկայացնելը ապրանքների բացթողման ժամանակ դրանց մաքսային հայտարարագրման առանձնահատկությունները
ԽԴԴ	Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքով ապօրինի տեղափոխվող ապրանքների մաքսային հայտարարագրման առանձնահատկությունները
ԴՅԴ	Խողովակաշարային տրանսպորտով և էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների մաքսային հայտարարագրման լրացուցիչ առանձնահատկությունները (լրացուցիչ ժամանակավոր հայտարարագիր) (Ռուսաստանի Դաշնության համար)
ԽԴԴ	Մաքսային միության մաքսային օրենսդրությանը և (կամ) Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան ապրանքների մաքսային հայտարարագրման այլ առանձնահատկություններ
ՅՕՑ	Ապրանքների մաքսային հայտարարագրումը՝ նշելով կողմնորոշիչ տեղեկություններ (Բելառուսի Հանրապետության համար)
ՅԴՑ	Ապրանքների մաքսային հայտարարագրումը՝ նշելով կոնկրետ տեղեկություններ (Բելառուսի Հանրապետության համար)

(հավելվածը փոփ. ԵՏՀԿ 12.05.15 թիվ 52, խմբ., փոփ. ԵՏՀԿ 16.01.18 թիվ 5, լրաց. ԵՏՀԿ 14.05.19 թիվ 71, ԵՏՀԿ 21.04.20 թիվ 50, ԵՏՀԿ 24.11.20 թիվ 154, խմբ. ԵՏՀԿ 12.05.22 թիվ

Մաքսային վճարումների վճարման գծով արտոնությունների դասակարգիչ

Անվանում	Ծածկագիր
1	2
Բաժին 1. Եվրասիական տնտեսական միության իրավունքով նախատեսված արտոնություններ	
1.1. Մաքսատուրքի վճարման գծով արտոնություններ	
Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ Մաքսային միության անդամ պետությունների արժույթի, երրորդ երկրների արժույթի (բացի դրամագիտական նպատակներով օգտագործվող արժույթից), ինչպես նաև արժեթղթերի համար ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում	ББ
Որպես մարդասիրական օգնություն և (կամ) վթարների, աղետների ու տարերային աղետների հետևանքները վերացնելու նպատակով Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների համար ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում	БГ
Որպես անհատույց օգնություն (աջակցության), ինչպես նաև պետությունների, միջազգային կազմակերպությունների, կառավարությունների կողմից բարեգործական՝ ներառյալ տեխնիկական օգնություն (աջակցություն) ցուցաբերելու նպատակներով ներմուծվող ապրանքների համար, բացի ենթակցիզային ապրանքներից (բացառությամբ հատուկ բժշկական նպատակների համար նախատեսված թեթև մարդատար ավտոմոբիլների), ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում	БТ
Օտարերկրյա պետությունների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան տրամադրված վարկերի հաշվին ներմուծվող սարքավորումների, այդ թվում՝ տվյալ սարքավորման՝ մատակարարվող կոմպլեկտի մեջ մտնող մեքենաների, մեխանիզմների, կյուբերի և կոմպլեկտավորող տարրերի (բացառությամբ ենթակցիզային ապրանքների) համար ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում	КМ
Մաքսային միության անդամ պետությունների բյուջեներով հատկացված նպատակային միջոցների հաշվին ձեռք բերված՝ Մաքսային միության տարածքում անալոգը չունեցող մանկական սննդի արտադրության համար նախատեսված սարքավորումների (դրանց կոմպլեկտավորող տարրերի և պահեստամասերի), ինչպես նաև օտարերկրյա պետությունների կամ օտարերկրյա պետությունների կառավարությունների կողմից տրամադրված՝ օտարերկրյա կապակցված վարկերի հաշվին ձեռք բերված՝ մանկական սննդի արտադրության համար նախատեսված սարքավորումների (դրանց կոմպլեկտավորող տարրերի և պահեստամասերի) համար ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում	ДП
ЕВСУ ԱՏԳ ԱՎ 8701, 8702, 8703, 8704, 8705 ապրանքային դիրքերում ընդգրկված, Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների կողմից «արդյունաբերական հավաքում» հասկացության կիրառմամբ արտադրված շարժիչով տրանսպորտային միջոցների համար ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում այն դեպքում, եթե կատարվեն սահմանված պայմաններն ու չափանիշները	ПС
Կազմակերպությունների կանոնադրական (պահուստային) կապիտալում այդ կապիտալի ձևավորման համար հիմնադիր փաստաթղթերով սահմանված ժամկետների սահմաններում որպես օտարերկրյա հիմնադրի ներդրում ներմուծվող ապրանքների համար ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում	УК
Կազմակերպության կանոնադրական (պահուստային) կապիտալում (ֆոնդում) Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված կարգով այդ կապիտալի (ֆոնդի) ձևավորման համար հիմնադիր փաստաթղթերով նախատեսված ժամկետների սահմաններում երրորդ երկրներից որպես հիմնադրի ներդրում ներմուծվող ապրանքների համար ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում	УФ
Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված՝ նավերի միջազգային ռեեստրներում գրանցվող լողացող նավերի համար ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում	РС
Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների նավերի, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից վարձակալված (վարձված) նավերի՝ խորջրյա գոտիներում արդյունագործական ձկնորսության արտադրանքի համար ներմուծման մաքսատուրքի	ПМ

վճարումից ազատում	
Եվրասիական տնտեսական միության անդամ պետության նավերի ռեեստրում գրանցված, Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից մեկի դրոշի ներքո լողացող, Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող և մինչև 2018 թվականի հունվարի 1-ը ներառյալ «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող՝ ձկնորսական նավերի, լողացող բազաների և ձկնամթերքների վերամշակման և պահածոյացման համար նախատեսված այլ ծովային նավերի (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8902 00 100 0 ծածկագիր) համար ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում	CM
Սոչի քաղաքում 2014 թվականի ծմեռային XXII օլիմպիական և ծմեռային XI պարալիմպիկ խաղերի անցկացման նպատակով ներմուծվող ապրանքների համար (բացառությամբ ենթաակցիզային ապրանքների) ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում	CO
(դիրքը հանվել է ԵՏՀԿ 24.04.17 թիվ 33)	AI
Մինսկ քաղաքում 2014 թվականի հոկտեմբերի աշխարհի առաջնության անցկացման նպատակով ներմուծվող ապրանքների համար (բացառությամբ ենթաակցիզային ապրանքների) ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում	ЧХ
(դիրքը հանվել է ԵՏՀԿ 16.01.18 թիվ 5)	HC
Եվրասիական տնտեսական միության անդամ պետության՝ առաջնահերթ համարվող գործունեության ոլորտում (տնտեսության ոլորտում) իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում, Եվրասիական տնտեսական միության այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, Եվրասիական տնտեսական միության անդամ պետության տարածքում բացառապես օգտագործվելու համար ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց կոմպլեկտավորող տարրերի և պահեստամասերի, հումքի և նյութերի համար ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում	ИП
Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կենտրոնական (ազգային) բանկերի կողմից ներմուծվող՝ լիզատուրային զանգվածի 1000 մասերի մեջ 995 մասերից ոչ պակաս քիմիապես մաքուր ոսկու պարունակությամբ ոսկու ծուլակտորի (99,5%-ից ոչ պակաս հարգ), լիզատուրային զանգվածի 1000 մասերի մեջ 999 մասերից ոչ պակաս քիմիապես մաքուր արծաթի պարունակությամբ արծաթի ծուլակտորի (99,9%-ից ոչ պակաս հարգ) և լիզատուրային զանգվածի 1000 մասերի մեջ 995,5 մասերից ոչ պակաս քիմիապես մաքուր մետաղի պարունակությամբ պլատինի ծուլակտորի (99, 95%-ից ոչ պակաս հարգ) համար ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում	DM
(դիրքը հանվել է ԵՏՀԿ 24.04.17 թիվ 33)	СГ
ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8802 40 003 5 և 8802 40 003 6 ծածկագրերով դասակարգվող քաղաքացիական ուղևորատար այն ինքնաթիռների առնչությամբ ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում, որոնք ներմուծվում են Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք մինչև 2031 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ՝ Եվրասիական տնտեսական միության այն անդամ պետության տարածքի սահմաններում դրանց օգտագործման նպատակով, ուր ներմուծվում է այդ ապրանքը, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տարածքների միջև փոխադրումների և (կամ) միջազգային փոխադրումների համար	BC*
Մաքսատուրքերի վճարման գծով 1.1-ին ենթաբաժնում չնշված այլ արտոնություններ	ТИ
BC ծածկագրով սահմանված արտոնության կիրառմամբ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծված քաղաքացիական ուղևորատար օդանավերի (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8802 40 003 5, 8802 40 003 6, 8802 40 004 6 ծածկագրեր) և Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքի սահմաններից դուրս դրանք վերանորոգելուց կամ տեխնիկական սպասարկում իրականացնելուց հետո շահագործման ժամկետի ընթացքում Բելառուսի Հանրապետություն ու Ղազախստանի Հանրապետություն ներմուծվող քաղաքացիական ուղևորատար օդանավերի համար ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում	CP
Օտարերկրյա արտադրության ուղևորատար օդանավերի վերանորոգման և տեխնիկական սպասարկման համար անհրաժեշտ օդանավերի շարժիչների, պահեստամասերի և սարքավորումների համար ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում	A3
Տեղափոխվող պաշարների համար ներմուծման կամ արտահանման մաքսատուրքի վճարումից ազատում	РП
«Ներքին սպառման համար բացթողում», «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)», «արտահանում» մաքսային ընթացակարգերից տարբեր մաքսային այլ ընթացակարգով ձևակերպված ապրանքների համար մաքսատուրք չի վճարվում	ПП
«Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում առանց ներմուծման մաքսատուրքի վճարման այն ապրանքների ժամանակավոր գտնվելը և օգտագործելը, որոնց կատեգորիաները սահմանվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից և (կամ) Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների՝ երրորդ կողմի հետ միջազգային պայմանագրերով	PB
Չարգացող երկրներից ծագող ապրանքների համար սակագնային առանձնաշնորհում	ГГ
Առավել թույլ զարգացած երկրներից ծագող ապրանքների համար սակագնային	HH

առանձնաշնորհում	
Սակագնային առանձնաշնորհում «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջև՝ մյուս կողմից, ազատ առևտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրին համապատասխան՝ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետությունում ծագող և Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների համար	BT
Մաքսային միության անդամ պետությունների հետ առևտրի ազատ գոտի ձևավորող պետություններից ծագող և ներմուծվող ապրանքների, ինչպես նաև Մաքսային միության անդամ պետությունից ծագող և դրանից Մաքսային միության անդամ պետության հետ առևտրի ազատ գոտի ձևավորող պետություն արտահանվող ապրանքների համար սակագնային առանձնաշնորհում մաքսատուրքի վճարումից ազատման տեսքով (բացառությամբ ՈՄ ծածկագրով սահմանվող սակագնային առանձնաշնորհման)	ՅՅ
Սակագնային առանձնաշնորհում «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Սինգապուրի Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» 2019 թվականի հոկտեմբերի 1-ի համաձայնագրին համապատասխան՝ Սինգապուրի Հանրապետության ծագում ունեցող և Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների համար	ՇԴ
Սակագնային առանձնաշնորհում «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Սերբիայի Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի գոտու մասին» 2019 թվականի հոկտեմբերի 25-ի համաձայնագրին համապատասխան՝ Սերբիայի Հանրապետության ծագում ունեցող և Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների համար (բացառությամբ ՇԵ ծածկագրով սահմանվող սակագնային առանձնաշնորհման)	ՇԵ
Սերբիայի Հանրապետությունից ծագող և «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Սերբիայի Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի գոտու մասին» 2019 թվականի հոկտեմբերի 25-ի համաձայնագրի թիվ 2 հավելվածով սահմանված սակագնային քվոտաների ծավալներով Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների համար սակագնային առանձնաշնորհում ներմուծման մաքսատուրքերի վճարումից ազատման տեսքով	
Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող ու դրանից արտահանվող և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տարածքներում տեղակայված դիվանագիտական ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների, օտարերկրյա պետությունների այլ պաշտոնական ներկայացուցչությունների կողմից պաշտոնական օգտագործման համար նախատեսված, ինչպես նաև այդ ներկայացուցչությունների դիվանագիտական ու վարչատեխնիկական անձնակազմի՝ ներառյալ նրանց հետ ապրող՝ իրենց ընտանիքների անդամների կողմից անձնական օգտագործման համար նախատեսված ապրանքների համար մաքսատուրքի վճարումից ազատում	ՄԺ
Մաքսատուրքի վճարման գծով արտոնություններ չեն հայցվում	ՕՕ
Բելառուսի Հանրապետությունում 2019 թվականի II Եվրոպական խաղերի նախապատրաստման և անցկացման նպատակով 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում ներմուծվող ապրանքների համար, ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում բացառությամբ ենթասկզբիցային ապրանքների	ԵԻ

«AC» ծածկագրով դիրքում «Մաքսային միության» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության» բառերով, «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի կողմից հաստատվող» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի մարտի 19-ի թիվ 9 որոշմամբ հաստատված» բառերով:

«AE» ծածկագրով դիրքում «Մաքսային միության» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության» բառերով:

(դիրքերը փոփ. ԵՏՀԽ 21.12.16 թիվ 153, փոփ., խմբ. ԵՏՀԿ 16.01.18 թիվ 5, լրաց. ԵՏՀԿ 30.10.18 թիվ 176)

Պարենային արտադրանքի արտադրության և իրացման համար օգտագործվող այն ապրանքների առնչությամբ ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում, որոնք Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք են ներմուծվում Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տնտեսությունների կայունության բարձրացմանն ուղղված միջոցներն իրականացնելու նպատակով, և որոնք ներառված են ցանկում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2022 թվականի մարտի 17-ի թիվ 37 որոշման թիվ 2 հավելվածի համաձայն	ԱՐ
Էլեկտրոնային արտադրանքի արտադրության համար օգտագործվող այն ապրանքների առնչությամբ ներմուծման մաքսատուրքի վճարումից	ԱՅ

ազատում, որոնք Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք են ներմուծվում Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տնտեսությունների կայունության բարձրացմանն ուղղված միջոցներն իրականացնելու նպատակով, և որոնք ներառված են ցանկում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2022 թվականի մարտի 17-ի թիվ 37 որոշման թիվ 4 հավելվածի համաձայն	
Թվային տեխնոլոգիաների զարգացման նպատակով օգտագործվող այն ապրանքների առնչությամբ ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում, որոնք Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք են ներմուծվում Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տնտեսությունների կայունության բարձրացմանն ուղղված միջոցներն իրականացնելու նպատակով, և որոնք ներառված են ցանկում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2022 թվականի մարտի 17-ի թիվ 37 որոշման թիվ 5 հավելվածի համաձայն	ԱԼ
